ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՎԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Հոկտեմբերի 28-ին, կիրակի, ԱՄՆ-ի Իլինոյս նահանգի Էվենստոն քաղաքի Ուզունյան տան մեջ տեղի է ունեցել Ս. Ներսես Շնորհալի աստվածաբանական վարժարանի պաշտոնական բացումը, եկեղեցական արարողությամբ։

Հանդիսության ներկա են եղել Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ և վարժարանի վարչական կազմի նախագահ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, վարժարանի տեսուչ և փոխ-նախագահ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ և փոխ-նախագահ գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը, վարչական մարմնի անդամ գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանը, Էվենստոնի Ս. Հակոբ եկեղեցու հովիվ հոգեշնորհ Տ. Վարուժան վարդապետ Գաբարաճյանը, վարժարանի ուսուցիչ, տեսչի օգնական և մատենադարանապետ բարեշնորհ Հովհաննես սարկավագ Գասպարյանը։

Հանդիսության ներկա են եղել նաև հայ և օտար այլ հրավիրյալներ, որոնց թվում վարժարանի բարերար Հակոբ Ուզունյանի այրին՝ տիկին Սաթենիկ Ուզունյանը։

Դպրոցի բացման արարողությունից հետո տեղի է ունեցել վարչական մարմնի նիստը, ուր տեսուչ սրբազանը զեկուցել է կատարված աշխատանքների մասին։

Ս. Ներսես Շնորհալու անվան աստվածաբանական դպրոցը այժմ ունի երկու ուսանող։

Ժողովից հետո, քաղաքի Բիկ-Ջորջեն հյուրանոցում տրվել է ճաշկերույթ վարժարանի բացման առթիվ, որին մասնակցել են շուրջ 40 հայ և օտար հրավիրյալներ։ Ընդունելության ընթացքում Տ. Սիոն, Տ. Տիրան և Տ. Թորգոմ սրբազանները իրենց ելույթներում նշել են Ս. Ներսես Շնորհալու անվան աստվածաբանական վարժարանի օգտակար ձեռնարկի կարևորությունը։

Ճաշկերույթի ժամանակ ընթերցվել են նաև վարժարանի բացման ուրախ առիթով ստացված շնորհավորական հեռագրերը։